Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/14273/02/21
2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«26» հոկտեմբերի 2023 թվական ք. Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ/14273/02/21 քաղաքացիական գործով ըստ Ոսկան Ափիյանի հայցի ընդդեմ Մարիամ Ափիյանի՝ պայմանագիրը վերացնելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջների մասին, Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն. Թորոսյանի կողմից 06.10.2023 թվականին կայացված «Քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու վերաբերյալ» որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Դիմելով դատարան՝ Ոսկան Ափիյանը, որպես հայցի իրավական հիմք վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 600-րդ և 601-րդ հոդվածները, պահանջել է վերացնել 01.08.2019 թվականին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրն ու որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Կոտայքի մարզի Արզնի գյուղի թիվ 8 փողոցի 1-ին շենքի թիվ 19 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 04.05.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.10.2022 թվականի որոշմամբ Մարիամ Ափիյանի և գործին մասնակից չդարձած անձ Արֆենյա Բաղրամյանի բերած վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ Դատարանի 04.05.2022 թվականի վճիռը բեկանվել է, ու գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 18.01.2023 թվականի որոշմամբ Ոսկան Ափիյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է և սահմանվել է հնգօրյա ժամկետ՝ վճռաբեկ բողոքում առկա թերությունը շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 07.03.2023 թվականի որոշմամբ Ոսկան Ափիյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 20.04.2023 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ, և 14.08.2023 թվականին նշանակվել է նախնական դատական նիստ:

14.08.2023 թվականին նշանակված նախնական դատական նիստում պատասխանող Մարիամ Ափիյանի ներկայացուցիչը միջնորդել է սույն քաղաքացիական գործը հանձնել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը, քանի որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ե. Եսոյանը, վկայակոչելով պատասխանողի ներկայացուցչի դիրքորոշումն այն մասին, որ սույն քաղաքացիական գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ, և ինքն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, քանի որ վեճի առարկա գույքը գտնվում է Կոտայքի մարզում, պատճառաբանելով, որ վեճի առարկա հանդիսացող գույքի գտնելու հասցեն չի ընդգրկվում Երևան քաղաքի տարածքում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածով ու 25-րդ հոդվածի 4-րդ մասով, գտել է, որ սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել անշարժ գույքի գտնվելու վայրի՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն. Թորոսյանը, ստանալով թիվ ԵԴ/14273/02/21 քաղաքացիական գործը և համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, 06.10.2023 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու վերաբերյալ՝ այն պատճառաբանությամբ, որ Մարիամ Ափիյանի հաշվառման հասցեն Երևան, Ավան, Չարենցի փողոցի 15-րդ շենքի թիվ 16 բնակարանն է, քաղաքացիական գործով հայցի օբյեկտը՝ 01.08.2019 թվականի պայմանագիրն է, իսկ հայցի առարկան՝ այդ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին պահանջը:

Թիվ ԵԴ/14273/02/21 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանում ստացվել է 20.10.2023 թվականին:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ/14273/02/21 քաղաքացիական գործի նյութերը, գտնում եմ, որ սույն քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատությունը

կարող է փոխվել կողմերի գրավոր համաձայնությամբ մինչև առաջին ատյանի դատարան հայցադիմում ներկայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցը ներկայացվում է հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է այլ դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն վարույթ է ընդունվել նույն օրենսգրքի 24-րդ կամ 138-րդ հոդվածով սահմանված կանոնների խախտմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չլինելու դեպքում հայցը որպես կանոն ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան: Ընդ որում, նշված ընդդատությունը մինչև առաջին ատյանի դատարան հայցադիմում ներկայացնելը կողմերի գրավոր համաձայնությամբ կարող է փոխվել:

Միևնույն ժամանակ օրենսդիրը տարածքային ընդդատության վերը նշված ընդհանուր կանոնից նախատեսել է որոշակի բացառություններ՝ սահմանելով նաև, որ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ

պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցը ներկայացվում է հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Ընդ որում, նշված կանոնը ենթակա չէ փոփոխման ինչպես կողմերի գրավոր համաձայնությամբ, այնպես էլ պայմանավորված չէ պատասխանողի՝ մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ հայտնված առարկությամբ:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով համապատասխան իրավակարգավորումներ է նախատեսել նաև այն մասին, թե ե՞րբ է դատարանը գործը հանձնում այլ դատարանի քննությանը՝ սահմանելով, որ այդ դեպքերից է նաև այն դեպքը, երբ դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունվել բացառիկ տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ, որի դեպքում դատարանը որոշում է կայացնում գործն այն դատարանի քննությանը հանձնելու մասին, որին նույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով ընդդատյա է տվյալ քաղաքացիական գործը:

Գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը: Իր հերթին Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը, որի դեպքում այդ դատարանը համարվում է իրավասու դատարան:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 21.08.2023 թվականին որոշում է կայացրել գործը Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին, ըստ էության, այն պատճառաբանությամբ, որ սույն գործը վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասում նշված ընդդատության կանոնների խախտմամբ՝ սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցը համարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի առարկա: Մինչդեռ, հիմք ընդունելով սույն գործով ներկայացված հայցի փաստական և իրավական հիմքերը, հայցի առարկան ու օբյեկտը, գտնում եմ, որ սույն գործով ներկայացված հայցը չի կարող համարվել այդպիսին, քանի որ թեև հայցվորը ներկայացրել է անշարժ գույքի՝ Կոտայքի մարզի Արզնի գյուղի թիվ 8 փողոցի 1-ին շենք թիվ 19 հասցեում գտնվող տան վերաբերյալ կնքված նվիրատվության պայմանագիրը վերացնելու և որպես հետևանք՝ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմում, սակայն ինչպես դրանում նշված իրավական ու փաստական հիմքերը, այնպես էլ՝ նյութաիրավական պահանջը կապված չեն ինչպես անշարժ գույքի նկատմամբ ***<u>հայցվորի սեփականության իրավունքը ճանաչելու</u>***, անշարժ գույքը պատասխանողի ***<u>ապօրինի տիրապետումից հետ պահանջելու</u>***, այնպես էլ՝ ***<u>հայցվորի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու</u>*** հետ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով այն, որ սույն քաղաքացիական գործում առկա նյութերի համաձայն՝ պատասխանող Մարիամ Ափիյանի հաշվառման վայրն է Երևան, Ավան, Չարենցի փողոցի 15-րդ շենքի թիվ 16 բնակարանը, գտնում եմ, որ թիվ

ԵԴ/14273/02/21 քաղաքացիական գործով իրավասու դատարան է հանդիսանում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, որի պայմաններում գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ/14273/02/21 քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/14273/02/21 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի
քաղաքացիական պալատի նախագահ **ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**